

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

« Հաստատում եմ »

Բուհի ռեկտոր,

Գ.Կ.Խաչատրյան

“ 05 ” 05 2014թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՎԱՆԱԶՈՐԻ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐԻ ԱՆՑԿԱՅՄԱՆ

Ընդունված է գիտական խորհրդի նիստում

Արձանագրություն թիվ 3

“ 30 ” 04 2014թ.

Վանաձոր 2014

I. Ընդհանուր դրույթներ

1. «Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպությունում (այսուհետ Բուհ) դպրոցականների օլիմպիադաների անցկացման կանոնակարգը (այսուհետ կանոնակարգ) սահմանում է Լոռու մարզի դպրոցականների օլիմպիադայի անցկացման նպատակները և խնդիրները, կազմակերպչական-մեթոդական ապահովումը, անցկացման և ֆինանսավորման կարգը, դպրոցականների մասնակցությունը և հաղթողներին ու մրցանակակիրներին որոշելու կարգը:

2. Սույն կանոնակարգը մշակված է՝

- ՀՀ « Կրթության մասին» օրենքի,
- «ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների անցկացման մասին » ՀՀ կրթության և գիտության նախարարի 05.04.2011թ. թիվ 280-ն հրամանի հիման վրա

II. Օլիմպիադայի անցկացման հիմնական նպատակները և խնդիրները

3. Օլիմպիադայի անցկացման հիմնական նպատակները և խնդիրներն են՝

1). Աշակերտների ստեղծագործական ընդունակությունների, գիտահետազոտական գործունեության նկատմամբ հետաքրքրության բացահայտումը և զարգացումը, մասնագիտության ճիշտ ընտրությանը նպաստելը,

2). Օժտված երեխաներին սատարելու անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

4. Բուհում կազմակերպվող օլիմպիադայում կամավորության սկզբունքով կարող են մասնակցել Լոռու մարզի պետական և ոչ պետական հանրակրթական դպրոցների և վարժարանների բարձր դասարանների սովորողները:

5. Բուհի օլիմպիադան անցկացվում է յուրաքանչյուր տարվա մարտ-ապրիլ ամիսներին: Օլիմպիադայի անցկացման ստույգ ժամկետը որոշվում է Բուհի գիտխորհրդի կողմից:

6. Օլիմպիադան անցկացվում է հանրակրթական առարկաներից, որոնց ցանկը որոշվում է ռեկտորի և պրոռեկտորների կողմից:

7. Օլիմպիադայի անցկացման մեթոդական ապահովումը

1). Բուհի օլիմպիադան անցկացվում է օլիմպիադայի առարկայական մեթոդական հանձնաժողովի կողմից՝ հանրակրթական ծրագրերի հիման վրա մշակված առաջադրանքներով:

2). Յուրաքանչյուր առարկայական առաջադրանքը պետք է բաղկացած լինի.

- հումանիտար առարկաներ՝ 50 հարցից ոչ ավելի,

- բնագիտական առարկաներ՝ 20 հարցից ոչ ավելի:

3). Գնահատումը կատարվում է 20-միավորանոց սանդղակով՝ պահպանելով տասնորդական միավորներով գնահատելու կարգը:

4). Առաջադրանքների կատարման համար սահմանված ժամանակը՝ 2,5 ժամ:

III. Հաղթողների որոշման կարգը

8. Օլիմպիադայի հաղթողներ են ճանաչվում այն մասնակիցները, որոնք հավաքել են.

1). 20-19 միավոր՝ 1-ին տեղ,

2). 18 միավոր՝ 2-րդ տեղ,

3). 17 միավոր՝ 3-րդ տեղ:

9. Օլիմպիադայի հաղթողներին հանձնվում են հատուկ վկայականներ:

10. Օլիմպիադայի ընդհանուր ղեկավարությունը իրականացվում է ռեկտորի հրամանով հաստատված կազմկոմիտեի կողմից, որը գործում է համաձայն սույն Կանոնակարգի դրույթների:

11. Օլիմպիադայի անցկացման ընթացքում առաջացող հարցերի օպերատիվ լուծման համար ստեղծվում է հանձնախումբ՝ հանձնաժողովի նախագահի, մեթոդական հանձնաժողովի նախագահի և կազմկոմիտեի ներկայացուցչի անդամակցությամբ:

12. Օլիմպիադայի առաջադրանքների կատարման գնահատման, հաղթողներին և մրցանակակիրներին որոշելու համար ստեղծվում է մրցութային հանձնաժողով, որի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն Կանոնակարգի:

13. Մրցութային հանձնաժողովի անդամները ընտրում են հանձնաժողովի նախագահ, որի թեկնածությունը համաձայնեցվում է ռեկտորի հետ և ամրագրվում է հրամանով:

14. Օլիմպիադայի մեթոդական ապահովման նպատակով կազմակերպվում են առարկայական հանձնաժողովներ, որոնց կազմը հաստատվում է ամբիոնների վարիչների առաջադրմամբ՝ ֆակուլտետների ուսումնամեթոդական խորհուրդներում, և ներկայացվում է ռեկտորի հաստատմանը:

Առարկայական հանձնաժողովի գործունեությունը իրականացվում է համաձայն սույն Կանոնակարգի:

IV. Օլիմպիադայի ֆինանսական ապահովումը

15. Օլիմպիադայի անցկացումը ֆինանսավորվում է Բուհի բյուջեից: Տրամադրվող միջոցները նախատեսված են.

- անհրաժեշտ նյութերի ձեռքբերման,
- հաղթողների պարգևատրման համար:

V. Օլիմպիադայի անցկացման ընթացակարգը

16. Լոռու մարզի դպրոցականների առարկայական օլիմպիադան կազմակերպվում է Բուհում մեկ փուլով:

17. Օլիմպիադան անցկացվում է տարիքային խմբերով՝ IX, X, XI դասարանների աշակերտների համար:

18. Օլիմպիադան կազմակերպելու համար Բուհը տեղեկատվական նամակ է ուղարկում Լոռու մարզի դպրոցների տնօրեններին՝ օլիմպիադայի անցկացման օրվանից առնվազն մեկ ամիս առաջ:

19. Հայտերը ընդունվում են մինչև տեղեկատվական նամակում նշված հայտագրման վերջին օրը: Հայտերում անհրաժեշտ է նշել աշակերտների տարիքային խմբերը, դասարանները, առարկաները:

20. Հայտերը ներկայացվում են Ինստիտուտի համագործակցության և կապերի բաժին:

21. Դպրոցներից ստացված հայտերի հիման վրա կազմվում են աշակերտների ցուցակները՝ ըստ առարկաների և դասարանների:

22. Օլիմպիադայի մասնակիցները ներկայանում են ինստիտուտ օլիմպիադան սկսվելու ժամից կես ժամ առաջ՝ գրանցվելու համար:

23. Օլիմպիադայի առաջադրանքները ստուգվում են տեղում՝ օլիմպիադայի ավարտից անմիջապես հետո:

24. Օլիմպիադայի արդյունքները և մասնակիցների ստացած միավորները հայտարարվում են օլիմպիադայի ավարտից հետո՝ մեկ շաբաթվա ընթացքում: Արդյունքները տեղադրվում են ինստիտուտի կայքում:

25. Օլիմպիադայի հաղթողները պարգևատրվում են Բուհի ռեկտորի կողմից I, II, III կարգի դիպլոմներով և գովասանագրերով:

VI. Ամբիոնների մասնակցությունը օլիմպիադայի կազմակերպման և անցկացման գործընթացում

26. Օլիմպիադայի անցկացման օրվանից մեկ ամիս առաջ ռեկտորի հրամանով ստեղծվում է օլիմպիադայի անցկացման կազմկոմիտե՝ պրոռեկտորների, ուսումնական վարչության ներկայացուցիչների, համագործակցության և կապերի , բուհ-դպրոց կապերի բաժինների աշխատակիցների ներգրավմամբ:

27. Օլիմպիադայի անցկացման օրվանից մեկ ամիս առաջ ռեկտորի ստորագրությամբ ամբիոններին ուղարկվում է տեղեկատվական գրություն՝ օլիմպիադայի անցկացման մասին, որի հիման վրա ամբիոններում ձևավորվում են առարկայական- մեթոդական հանձնաժողովներ :

28. Ամբիոնները սահմանված ժամկետում՝ օլիմպիադայի անցկացման օրվանից առնվազն 10 օր առաջ դպրոցական ծրագրերի շրջանակներում կազմում են օլիմպիադայի առաջադրանքների տարբերակներ IX, X, XI դասարանների համար՝ տարբերակների պատասխաններով:

29. Ամբիոններն օլիմպիադայի անցկացման օրվանից 10 օր առաջ առաջադրանքների տարբերակները և պատասխանների ձևաթղթերը փակ, ստորագրված, կնքված ծրարներով ներկայացնում են համագործակցության և կապերի բաժին: Առաջադրանքների էլեկտրոնային տարբերակները ևս ներկայացնում են համագործակցության և կապերի բաժին՝ ֆլեշներով:

30. Առաջադրանքներն անհամապատասխան ձևով կազմելու, ներկայացնելու և ներկայացման ժամկետները խախտելու դեպքում տվյալ առարկայից օլիմպիադա չի անցկացվում: